

քատ ի զուր չեր խնդրեր օժանդակութիւն,  
ոչ մի մարդ չեր լիներ ուրիշին նկատմամբ  
իրեւ օտարը . ոչ ոք չեր վարուեր միւսին  
հետ դաժանաբար և կասկածանօք . ոչ ոք  
չեր լիներ արգելք ուրիշների հանգատու-  
թեան և զռւարձութեան, ոչ ոք չեր ա-  
ռաջնորդէր իւր ընկերին դեպ ի չարք, և  
ամենքը զինքեանս կհամարէին մի հօր  
զաւակներ: Եւ այսպէսով կկատարուեր  
Վրիստոսի կամքը: Մարդկային բարու-  
թեան համար նա նուիրեց բոլոր իւր զօ-  
րութիւնը, բօլոր կարողութիւնը և մինչև  
անդամ՝ իւր կեանքը: ‘Կոյն կերպով պէտք  
է վարուի այն քրիստոնեայն’ որ կցանկայ  
նորան հետեւիլ: Մեր ոչ մի աշխատանքը,  
ոչ մի ծառայութիւնը, ոչ մի բարեգոր-  
ծութիւնը չի կորսուիր եթէ այլոց օգասա-  
կար են՝ թէ և մեղ համար լինին անօ-  
դուտ: Քարի գործը որքան անշահասի-  
րաբար լինի, այնքան աւելի է նորա արժա-  
նաւորութիւնը Աստուծոյ առաջեւ, այն-  
չափ ևս նշանաւոր է նորա վարձատրու-  
թիւնը յապագային:

Ով քրիստոնեայ, կտեսնեա արդեօք այս  
պատկերին մէջ քո առաքինութիւնը: Ե-  
թէ ոչ, ի՞նչ արգելք է լինում քեզ  
թողնել անհոգութիւնն ու ծուլութիւնը  
որոնք չեն թողում՝ զքեզ լինել այսպէս,  
ինչպէս որ հարկն է քեզ լինել Աւետարանի  
ուսմամբն ու կանոններովք: Եշխատիք յազ-  
թել այս վասակար անտարբերութեան  
դիտի առաքինութիւնը: Դէ՛ս որ թեկնա-  
մութիւն է ամեն ժամանակ տատանիլ  
մեղաց սահմաններում՝ այսօր ընդունելով  
հաստատուն կամք առաքինի լինելու, իսկ  
վաղին մոռանալով զայն: Միթէ չդար այն  
ո՞րևէ յորում զու ջերմեռանդ լինիս այն

ամեն բանի համար, որ կլերարերի բարե-  
պաշտութեան և առաքինութեան։ Վ. լիս-  
տոնիայի հոգի, անկեղծօրէն մտածէ, այս  
բանի վերայ։

Frances M. K. Wang

ԳԼՈՒԽ ՎԱՐԴԱՊԵՏ ԱԲԱՄԵԼԻՔՆԱՅՑ.

ԱԶԳԱՅԻՆ

Պ. ՄՈՎՍԻՍ ՅԱՐԱՒԹԵՒԵԱՆՑ.  
Երեւանայ Նորք թաղի Հայոց Ա. Սիմե-  
օն Եկեղեցւոյ գաւթում՝ ի պէտս գաս-  
տիարակութեան օրիորդաց Հայոց տե-  
ղուոյն՝ իւր սեփհական արդեամբք եւ  
ծախըռվ Ծխ. դպրոց հիմնել ու կառու-  
ցանել ըղձալով եւ ուխտելով Նորքեցի  
Մեծարգոյ Պ. Մովսէս Յարութիւննանց  
ի յիշատակքարի կոզակցւոյն իւրոյ հան-  
գուցելոյ ի Տէր, — Վ. ԵՀ. Հայրապետի  
օրհնութեան Կոնդակին արժանացաւ,  
եւ շինութեան սկզբնաւորութեան եւ  
այլոց համար եւս կարեւոր հրահանգ եւ  
հրամանը պատուիրեցաւ Թէմ. Ատենին  
Երեւանայ:

Այսովհայի մի բարեգործութեան վեհ-  
մութիւնը եւ գովեստը ուխտիւք մտա-  
զ բեալ Նպատակի կատարման եւ ար-  
դիւնաւորութեան մէջ տւելի փայլելով՝  
կսիրեմք յաւսալ՝ զի յիշեալ Պ. Յարու-  
թիւնեանց ջերմեռանց աղջայինն մեր  
կջանայ ընդ փոյթ իրագործել իւր ուխ-  
որ, զոր եւ ի գլուխ տանելով ըստ ար-  
ժանւոյն՝ ի ժամանակին դպրոցի շի-  
ութեան աւարտման եւ ըացման՝ ինչ-

պէս նաեւ Հայազն օրիորդաց ի նոյն գպրոց փոխադրուելոյն աւետիսը հազորդելոյ բարեբազդութիւնը կունենամք հանդերձ շնորհակալութեամբք մեր եւ ժողովրդեան:

### Մ Ե Տ Ի Կ .

Ի Տիմիս հրատարակեալ Մէջ-լրագրի 16. ըդթուոյն մէջ Աստրախանում կատարուած մի հանդէսը նկարագրելով՝ նամակադիրն կյիշէ ժողովրդեան վերայ հանդիսապետ Եպիսկոպոսին մի տեսակ Մշիկ կոչուած գործիքով զուշ սրբիւր եւ կհարցանէ՝ եթէ Հայաստանեայց Եկեղեցւոյ մէջ այնպիսի մի սովորութիւն կայ:

Ուստի պարոք կհամարիմք մեզ պատասխանել, զի Հայաստանեայց Եկեղեցին երեւէ այնպիսէ պամ օրհնած զուշ սրբիւր սուլու-նիւն լունի, հետեւաբար կդժուարանամք հաւատալ՝ որ Գեր. Դէորդ Արքեպիսկոպոս Վեհապետեանց լւր վիճակին մէջ՝ ուր ուրեք եւ իցէ՝ թոյլառութիւն տռաւած լինի այնպիսի օտար եւ նոր սովորութեան, միանդամայն եթէ ստոյգ է հրատարակուածը՝ երբէք չեմք յուսար որ միւսանդամ կրկնել ներէ:

### ՏԱՐՈՒԻՆԱԿ ԳԻՍՍԱԼՈՐՆԵՐ .

Փետրուար ամսոյ Արարատին մէջ Թէպէտեւ ընդհանուր տեսութիւն մի ըրած էինք հայկական հոգեւոր ծխական Դպրոցաց արդի եւ ապահայ վիճակին վրայ, բացատրելով նոցա ունենալիք յարաբերութիւն-

ները ի առիպիլ հարկին տէրութեան ուսումնական վարչութեան նետ, բայց արդ հարկաւոր դասուեցաւ մասնաւորել մեր տեսութիւնը հայազգի Դպրոցաց ներքին կառավարութեան նկատմամբ՝ ցաւօք սրտի նկատելով՝ որ քանի մի տեղեր, ինչպէս նաեւ Սիմֆերովոլ քաղաքին մէջ ի Տաւրիթեան Թերակղզին, անհնուատեան ու հակագային խլսումն կայ քանի մի օտարուսումն եւ հակառակասէր ազգային անհատներու կողմանէ՝ մեր ազգի Շայրադոյն Հոգեւոր Խշանութենէ անկախ ու անհամամիտ գործառնութեանց տեղի տալով՝ յանգոյշաւ սերմանել միամիտ ժողովրդեան մէջ այն երկարառակութիւնն ու անմիաբանութիւնը, որ փոխանակ յառաջադիմութեան, ինչպէս ի փորձոյ ստուգուած Է՝ յետախաղաց արդիւնքներ կարտարերէ հանդերձ այլովք բազմապատիկ ցաւալի հետեւամօք:

Քոչ յայտնի է մեր ազգի սկզբնական ու հանրակրթական Դպրոցաց հոգաբարձութեանց, որ ըստ նորոգ տնօրէնութեան Ազգասէր եւ Սրբազնադոյն Հայրապետի ամենայն Հայոց՝ իւրաքանչյւր վիճակաց մէջ հաստատուած են Թեմական տեսուժներ եւ տեղ տեղ նոցա օգնականներ, որոց ի լրանալ տարեկան ուսումնական շրջանին՝ անշուշտ պիտի արուին իւրաքանչյւր հոգաբարձութեանց կողմանէ օրինաւոր եւ բարեկարգ ցուցակ նոցա հակողութեան ներբոյ գտնուող դպրոցաց տնտեսական եւ ուսումնական վիճակին վերայօք: Եւ որովհետեւ այդ ցուցակները ամենայն տարի Թեմական տեսչաց կողմանէ պիտի առաջարկուին նաեւ Ս. Ա. Թոռոյ Ճեմարանի նկատողութեան եւ այդ ցուցակներէն կարելի պիտի լինի Եղրակացնել մեր Դպրոցաց յառաջադիմութիւնը կամ յետանացութիւնը նաեւ ըստ ուսումնական մասին, ուստի ամենայն տեղ հոգաբարձուք դպրոցաց սաստիկ պիտի գդուշանան եւ պիտի խորշին իսկ տարեկան ուսումնական ընթացքը չաւարտուած որ եւ է փոփոխութիւն ընել առանձին տեսչաց կամ վարժապետաց մէջ յանմնէ՝ առանց զիտութեան Թեմական տեսչաց կամ որ եւ է ստիպողական հարկի:

Այս տեսակ ցուցակներէն Հոգեւոր Խշանութիւնը բայց բաւականին տեղիկանալով իւրաքանչյւր առարկայից արդիւնաւոր կամ ապարդին դասատուութեանը, ի հարկէ չապաղիր յիւրմէ պարտեւպատշաճ տընօրէնութիւնը ընել յիւրումն ժամանակի տեսչաց կամ